

Արբիտրաժ Խաղ-Մրցույթ-2024

ԱՐԲԻՏՐԱՅԱՅԻՆ ԳՈՐԾ-10

«Պալաս» ՍՊԸ

ընդդեմ

«Ասուլայ» ՍՊԸ և «Գրանդ Քանսթրաքթ» Էլ.Էլ.Սի.

1- «Ասուլայ» ՍՊԸ-ն («Ասուլայ») Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերություն է, որ զբաղվում է շինարարական նյութերի ներմուծմամբ և վաճառքով՝ Հայաստանի Հանրապետությունում:

2- «Պալաս» ՍՊԸ-ն («Պալաս») Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերություն է, որ բազմաբնակարան շենքերի կառուցմամբ և վաճառքով է զբաղվում Հայաստանի Հանրապետությունում և արդեն մի քանի տարի է, որ իր ծրագրերի անհրաժեշտ շինարարական նյութերի ապահովման համար համագործակցում է Ասուլայի հետ:

3- Պալասը, իր շինարարական ծրագրերից մեկի իրագործման համար 2023 թվականի մայիսի 4-ին դիմել է Ասուլային 2,000 տոննա առաջին կարգի շինարարական գաջ գնելու համար, քանի որ այդ քանակով գաջ հնարավոր չէ ապահովել տեղական շուկայից Պալասի համար անհրաժեշտ ժամանակահատվածում: Այս նպատակով 2023 թվականի մայիսի 15-ին պայմանագիր է ստորագրվում Ասուլայի և Պալասի միջև («Պայմանագիր») որով՝

3.1 Ասուլայը պարտավորվում է 2,000 տոննա «ԱԲԳ» բաղադրությամբ գաջ Պալասի պատվերով արտերկրից ներմուծել և մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը հանձնել Պալասին:

3.2 Քանի որ Պայմանագիրը կնքելու պահին կողմերի համար հայտնի չէ պահանջված գաջը արտերկրից գնելու և ՀՀ ներմուծելու գինը, կողմերի պայմանավորվածությամբ Ասուլայը պետք է մատչելի գնով լավագույն մատակարարող ապահովելու համար հայտարարություն տեղադրի համապատասխան ինտերնետային կայքում և ներկայացնելով պատվիրվող գաջի մանրամասն բաղադրությունը (ԱԲԳ) և մատակարարման ժամկետները առաջարկի հետաքրքրված վաճառողներից ներկայացնել նշված պայմաններին համապատասխան գին և բոլոր այլ պայմանները:

3.3 Վաճառքի առաջարկները ստանալուց հետո Ասուլայը պարտավոր է դրանք ներկայացնել Պալասին, որի հետ խորհրդակցելուց և Պալասի համաձայնությունը ստանալուց հետո գաջի գնման պայմանագիրը կնքել Պալասի համաձայնությամբ ընտրված վաճառողի հետ:

3.4 Գաջի գնման և ներմուծման գնի և այդ կապակցությամբ Ասուլայի մատակարարած ծառայությունի հատուցման գումարի մասին կողմերը կհամաձայնվեն վաճառողի կողմից առաջարկը ստանալուց և վաճառքի ու ՀՀ ներմուծման ծախսերի կապակցությամբ կողմերի միջև համաձայնություն կայանալուց հետո:

4- Պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո Ասուլը համապատասխան ինտերնետային կայքում հայտարարություն է տեղադրում, խնդրում ՀՀ ներմուծման նպատակով 2.000 տոննա «ԱԲԳ» բաղադրությամբ գաջի վաճառքով հետաքրքրված ընկերություններին ներկայացնել իրենց առաջարկը նշելով գինը (ներառյալ ՀՀ փոխադրման և ապահովագրման արժեքը) և մատակարարման ժամկետները: Նույն հայտարարությամբ Ասուլը պահանջում է հետաքրքրված ընկերություններին իրենց առաջարկը ներկայացնել մինչև 2023 թվականի հունիսի 10-ը:

5- Ասուլի գրությանը նշված ժամկետում դրական պատասխան են տալիս մեկ մալեզիական, մեկ հնդկական և մեկ Արաբական Միացյալ Էմիրությունների ընկերություններ:

6- Ասուլը առաջարկները ստանալուց անմիջապես հետո դրանք, ներառյալ բոլոր մանրամասները, առաջարկված վաճառքի գինը և փոխադրման և ապահովագրման ծախսերը, իր 15 հունիս 2023 թվականի գրությամբ փոխանցում է Պալասին, որից հետո Ասուլի և Պալասի ներկայացուցիչները 2023 թվականի հունիսի 17-ին հանդիպում են, միասնաբար քննարկում ստացված առաջարկները և կողմերի միջև ստորագրվում է Պայմանագրի լրացուցիչ հավելված («**Հավելված**») հետևյալ պայմաններով`

«Հոդված 1- Պալասի պատվերով Ասուլը համաձայնվում է հնդկական «Գրանդ Քանսթրաքթ Էլ.Էլ.Սի.» («**Գրանդ**») ընկերության հետ կնքել 2,000 տոննայի «ԱԲԳ» բաղադրությամբ գաջի առուվաճառքի պայմանագիր հետևյալ պայմաններով`

(1) Գին` յուրաքանչյուր տոննայի համար 100 ԱՄՆ դոլար (CIP Երևան ՀՀ), ընդհանուր գին` 200,000 ԱՄՆ դոլար.

(2) Հանձնման կետ` Պալասի պահեստը` Երևան քաղաքում.

(3) Ապրանքը Պալասի կողմից ստացման ժամկետը` 10 օգոստոսի 2023 թ.

Հոդված 2- Ապրանքի մաքսագերծման համար Հայաստանի Հանրապետությունում պատասխանատու է Ասուլը իսկ մաքսագերծման բոլոր ծախսերը, ներառյալ ներմուծման մաքսային վճարները, տուրքը և հարակից բոլոր ծախսերը Պալասի կողմից կփոխհատուցվեն Ասուլին ի դիմաց վճարումները ապացուցող փաստաթղթերի:

Հոդված 3- Ասուլի և Գրանդի միջև առուվաճառքի պայմանագրի ստորագրումից առավելագույնը 10 օրվա ընթացքում Պալասը պարտավոր է Ասուլի բանկային հաշվին փոխանցել առուվաճառքի պայմանագրի ամբողջ գումարը, որը Ասուլի կողմից Գրանդին կվճարվի ակրեդիտիվի միջոցով:

Հոդված 4- Գնված ապրանքի համապատասխանությունը պահանջված «ԱԲԳ» բաղադրության հետ որոշելու համար Ասուլը պարտավոր է ապրանքի ստուգման համար համապատասխան պայմանագիր կնքել Հնդկաստանում ապրանքների ստուգման ծառայություններ մատակարարող բարեհամբավ միջազգային մեկ կազմակերպության հետ: Այդ կազմակերպության մատակարարած ծառայությունների համար Ասուլի կողմից վճարված գինը կփոխհատուցվի Պալասի կողմից` ի դիմաց գումարն ու վճարումը հավաստող փաստաթղթերի:

Յոթերորդ 5- Պալատը պարտավորվում է Ասուլային վճարել ապրանքի գնի 10 տոկոսը՝ 20,000 ԱՄՆ դոլար, Ասուլայի կողմից մատուցված ծառայությունների դիմաց:

Յոթերորդ 6- Կողմերի միջև 2023 թվականի մայիսի 4-ին կնքված Պայմանագրի և այս Հավելվածի կնքման, կատարման կամ մեկնաբանման, ինչպես նաև խախտման, դադարման կամ անվավերության հետ կապված ցանկացած վեճ («Վեճ») պետք է վերջնականորեն լուծվի արբիտրաժի միջոցով: Արբիտրաժը կիրականացնի ՀՀ-ում աշխատող «Իրավարար» Արբիտրաժային Կենտրոնը՝ երեք Արբիտրից բաղկացած Արբիտրաժային Տրիբունալի միջոցով, որում յուրաքանչյուր կողմ կնշանակի իր Արբիտրին ու կողմերի կողմից նշանակված Արբիտրները կնշանակեն երրորդ Արբիտրին, ով կնախագահի Տրիբունալը: Արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն, Արբիտրաժի լեզուն՝ հայերեն:

Վեճի լուծման համար կիրառելի է ՀՀ իրավունքը:

Արբիտրաժի վճիռը վերջնական է և ենթակա հարկադիր կատարման:»

7- Հավելվածի ստորագրումից 10 օր հետո, 2023-ի հունիսի 27-ին առուվաճառքի պայմանագիր («**Առուվաճառքի Պայմանագիր**») է ստորագրվում Ասուլայի և Գրանդի միջև, որի մեջ ներառված են հետևյալ պայմանները՝

«**Յոթերորդ** 1- Այս Առուվաճառքի Պայմանագիրը ստորագրելով Գրանդը Ասուլային է վաճառում 2,000 տոննա «ԱԲԳ» բաղադրությամբ գաջ (այսուհետ «**Գաջ**» կամ «**Ապրանք**») հետևյալ պայմաններով՝

- 1.1 Այս Առուվաճառքի Պայմանագրով վաճառված Ապրանքի ընդհանուր գինն է 200,000 դոլար («**Պայմանագրի Գին**»)՝ յուրաքանչյուր տոննայի դիմաց 100 ԱՄՆ դոլար CIP Երևան, Հայաստանի Հանրապետություն:
- 1.2 Պայմագրի Գինը Գրանդին կվճարվի ակրեդիտիվով, որը է պետք է Ասուլայի կողմից Գրանդին վճարվելու համար բացվի կողմերի համար ընդունելի բանկի մոտ:
- 1.3 Ակրեդիտիվի գումարը վճարող բանկի կողմից Գրանդին կվճարվի ակրեդիտիվի վճարման համար նախատեսված փաստաթղթերի ներկայացման թվականից երկու ամիս հետո.
- 1.4 Պայմանագրի Գինը ստանալու համար Գրանդը պետք է ակրեդիտիվը վճարող բանկին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝
 - (1) Հաշիվ ապրանքագիր
 - (2) Բեռնագիր
 - (3) Ծագման հավաստագիր
 - (4) Ապահովագրման վկայագիր
 - (5) Ինսպեկցիոն ընկերության կողմից տրված ստուգման վկայագիր:
 - (6) Ապրանքի հանձնման թվական՝ ամենաուշը մինչև 2023-ի օգոստոսի 10-ը:

Յոթերորդ 2- Ասուլայը տեղեկացնում է Գրանդին և Գրանդը հաստատում է, որ տեղեկացված է և իր համաձայնությունն է տալիս առայն, որ՝

2.1 Ասուլայը Ապրանքը գնում է Հայաստանի Հանրապետությունում գտնվող «Պալատ» ՍՊԸ ընկերության համար, որը և իրական շահառուն է Առուվաճառքի Պայմանագրի:

2.2 Ապրանքի Յողված 1-ում նշված «ԱԲԳ» բաղադրության հետ անհամապատասխանության դեպքում, Գրանդը ուղղակի պատասխանատու է Պալասին:

2.3 Գրանդը պարտավոր է Ապրանքը Պալասի պահեստը հանձնել ամենաուշը մինչև 2023-ի օգոստոսի 10-ը:

Յողված 14- Վեճերի լուծման կարգ

14.1 Կողմերը հաստատում են, որ այն դեպքում, որ այս Առուվաճառքի Պայմանագրի կատարման կամ այս Պայմանագրով նախատեսված Գրանդի կողմից իր պարտավորությունների խախտման հետևանքով Պալասի կողմից արբիտրաժային գործ հարուցվի Ասուլի դեմ, Գրանդը պարտավոր է Ասուլի պահանջի դեպքում Ասուլի հետ միասնաբար ներկայանալ արբիտրաժում:

14.2 Այս Առուվաճառքի Պայմանագրի կնքման, կատարման կամ մեկնաբանման, ինչպես նաև խախտման, դադարման կամ անվավերության հետ կապված ցանկացած վեճ, որ չի առնչվում Պալասին պետք է վերջնականորեն լուծվի արբիտրաժի միջոցով: Արբիտրաժը կիրականացնի միանձնյա արբիտրը որ կնշանակվի կողմերի համաձայնությամբ: Արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն, Արբիտրաժի լեզուն անգլերեն: Կողմերը հաստատում են, որ ցանկության կամ անհրաժեշտության դեպքում Պալասը կա կարող է, ըստ պարագային, միանալ արբիտրաժի կողմ հանդիսացող հայցվոր կամ պատասխանողին:»

8- Առուվաճառքի Պայմանագրի ստորագրմանը հաջորդող օրը, 2023-ի հունիսի 28-ին, Ասուլը էլեկտրոնային գրությամբ տեղեկացնում է Պալասին այդ մասին կցելով նաև Առուվաճառքի Պայմանագրի պատճենը:

9- Համաձայն Ասուլի և Պալասի միջև ստորագրված Պայմանագրի Հավելվածի 3-րդ հոդվածի, Պալասը 2023 թվականի հունիսի 30-ին Ասուլի բանկային հաշվին է փոխանցում Առուվաճառքի Պայմանագրի գինը՝ 200,000 ԱՄՆ դոլար:

10- Ասուլը 2023 թվականի հուլիսի 1-ին էլեկտրոնային նամակ է հղում «**Ինսպեկտ**» ընկերությանը հետևյալ բովանդակությամբ՝

«Ձեր ընկերությունը Ասուլ ՍՊԸ-ի կողմից նշանակվում է ստուգելու և համապատասխան ստուգման վկայագիր տալու հետևյալ ապրանքի համար՝

- Շինարարության մեջ օգտագործվող գաջ՝ ԱԲԳ բաղադրությամբ
- Քանակ՝ 2,000 տոննա
- Վաճառող՝ Գրանդ Քանսթրաքթ Էլ.Էլ.Սի. Նյու Դելի, Հնդկաստան.
- Ստուգման ժամկետը՝ բեռնաբարձումից առաջ:

Վերոնշյալ ծառայության համար վարձատրությունը կազմում է 5,000 ԱՄՆ դոլար՝ կանխավճարային: Համաձայնության դեպքում խնդրում ենք ձեր համաձայնությունը հաստատել էլեկտրոնային գրությամբ:»:

11- Նույն օրը Ինսպեկտը էլեկտրոնային գրությամբ հաստատում է իր համաձայնությունը և հաջորդ օրը՝ հուլիսի 2-ին Ասուլը Ինսպեկտին է փոխանցում համաձայնեցված 5,000 ԱՄՆ

դուլարը և գումարի փոխանցումն ապացուցող փաստաթղթի պատճենը ուղարկում Պալասին: Պալասը նույն օրը ամբողջ գումարը՝ 5,000 ԱՄՆ դոլար, փոխանցում է Ասուպի բանկային հաշվին:

12- Ինսպեկտի հաստատման նամակի հաջորդ օրը՝ հուլիսի 2-ին Ասուպը ՅՅ-ում աշխատում ԴԱԴ Բանկին է փոխանցում գնված Ապրանքի ամբողջ գինը՝ 200,000 ԱՄՆ դոլար և անհրաժեշտ ձևակերպումներից հետո ԴԱԴ Բանկը բացում է անհետկանչելի ակրեդիտիվ՝ հետևյալ պայմաններով՝

- 1- Համար՝ 801
- 2- Թվական 26 մայիս, 2023 թ.
- 3- Ակրեդիտիվ բացող բանկ՝ ԴԱԴ Բանկ, Հայաստանի Հանրապետություն
- 4- Վճարող բանկ՝ ՍԲՍ Բանկ, Նյու Դելիի, Յնդկաստան
- 5- Ստացող՝ Գրանդ Քանսթրաք Էլ.Էլ.Սի. ընկերություն
- 6- Գումար՝ 200,000 ԱՄՆ դոլար
- 7- Ապրանք՝ ԱԲԳ բաղադրությամբ շինարարության մեջ գործածվող գաջ
- 8- Քանակ՝ 2,000 տոննա
- 9- Վճարման ժամկետը՝ վճարման համար նախատեսված փաստաթղթերը վճարող բանկին հանձնելու ամսաթվից 2 ամիս հետո
- 10- Վճարել հետևյալ փաստաթղթերի ներկայացման դեպքում՝
 - Հաշիվ ապրանքագիր 2 օրինակ
 - Բեռնագիր 2 օրինակ
 - Ծագման հավաստագիր 2 օրինակ
 - Ապահովագրման վկայագիր 2 օրինակ
 - Ինսպեկտ ընկերության կողմից տրված ստուգման վկայագիր 2 օրինակ

Նույն օրը ԴԱԴ Բանկը ակրեդիտիվի պատճենը ուղարկում է Գրանդին:

13- Գրանդը ապրանքն ուղարկում է 2023 թվականի հուլիսի 15-ին: Նույն օրը Ինսպեկտը տրամադրում է ստուգման վկայագիր հետևյալ բովանդակությամբ՝

«15 հուլիս, 2023 թ.

Բեռնաբարձման ժամանակ ստուգելով ստորև նշված ապրանքը՝ սույնով հաստատում ենք, որ բեռնաբարձված ապրանքը համապատասխանում է հետևյալին՝

- Ապրանք՝ շինարարության մեջ օգտագործվող գաջ՝ ԱԲԳ բաղադրությամբ
- Քանակ՝ 2000 տոննա»

14- Գրանդը 2023-ի հուլիսի 17-ին ՍԲՍ Բանկին է ներկայացնում ակրեդիտիվում նշված բոլոր փաստաթղթերը:

15- ՍԲՍ Բանկը ստուգում է բոլոր փաստաթղթերը և դրանք ակրեդիտիվի պայմաններին համապատասխան համարելով հաստատում և ուղարկում է ԴԱԴ Բանկին նշելով՝ որ, ԴԱԴ Բանկը, 2023 թվականի սեպտեմբերի 17-ին պետք է ՍԲՍ Բանկին փոխանցի ակրեդիտիվի ամբողջ գումարը՝ 200,000 ԱՄՆ դոլար:

16- ԴԱԴ Բանկը, ստանալով փաստաթղթերը, դրանք հանձնում է Ասուպին Ապրանքի մաքսագերծման համար:

17- Ապրանքը ՀՀ սահման է հասնում 2023-ի հունիսի 30-ին: Գրանդը այդ մասին նույն օրը էլեկտրոնային գրությամբ տեղեկացնում է Ասուպին խնդրելով անմիջապես անհրաժեշտ ձևակերպումներն անել Ապրանքի մաքսագերծման համար, որպեսզի հնարավոր լինի ժամանակին Ապրանքը Պալասի պահեստ հասցնել:

18- Ասուպը ուշացնում է Ապրանքի մաքսագերծումը և մի քանի այդ մասին գրավոր հիշեցումներից հետո Գրանդը հունիսի 30-ին հետևյալ էլեկտրոնային նամակն է հղում Ասուպին՝

«Անկախ մեր բազմաթիվ հիշեցումներից դուք դեռևս չեք կազմակերպել Ապրանքի մաքսագերծում: Ապրանքը մնում է մասքսատանը և պահեստավորման գումար է կուտակվում, որի համար պատասխանատու եք դուք:

Նաև անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել, որ Ապրանքի հանձնումը Պալասին ուշացման դեպքում Ասուպն է պատասխանատու ուշացման բոլոր հետևանքների համար:»

19- Ի վերջո Ասուպը օգոստոսի 7-ին կազմակերպում է Ապրանքի մաքսագերծումը վճարելով մաքսագերծման համար սահմանված մաքսային վճարները, տուրքերը և մաքսագերծման ուշացման պատճառով կուտակված պահեստավորման ծախսերը: Մաքսագերծման փաստաթղթերում Ապրանքը ներկայացված է «2,000 տոննա գաջ՝ ԱԲԳ բաղադրությամբ»:

20- Նույն օրը Ասուպը Պալասին է ներկայացնում Ապրանքի մաքսագերծման համար վճարված գումարների ստացականները և Պալասը նույն օրը Ասուպի բանկային հաշվին է փոխանցում մաքսագերծման համար վճարված ամբողջ գումարը:

21- Նույն օրը, 2023 թվականի օգոստոսի 7-ի երեկոյան Ապրանքով բեռնավորված բեռնատարը շատվում է դեպի Երևան և օգոստոսի 10-ի կեսգիշերին հասնում Պալասի պահեստը՝ Երևանում:

22- Ապրանքը կրող բեռնատարի ուշ Պալասի պահեստը հասնելու պատճառով պահեստի պատասխանատուն առաջին հերթին հրաժարվում է ընդունել Ապրանքը բայց Ասուպի պնդումով և քանի որ բեռնատարը ուրիշ պատվեր կատարելու համար պետք է անմիջապես վերադառնար, իր անելիքն իմանալու համար զանգահարում է Պալասի տնօրենին և նրա թույլտվությունը ստանալուց հետո թույլ է տալիս Ապրանքը բեռնաթափել պայմանով, որ հանձնման և ստացման մասին փաստաթղթերը ստորագրվեն հաջորդ օրն առավոտյան:

23- Ապրանքը բեռնաթափվում է Պալասի պահեստում և ըստ նախապես կայացած համաձայնության օգոստոսի 11-ին Պալասը ստորագրում է հանձնման և ստացման մասին փաստաթուղթը:

24- Պալասը Ապրանքը իր պահեստում բացելուց հետո օգոստոսի 13-ին էլեկտրոնային նամակով հայտնում է Ասուպին, որ ստացված ապրանքը չունի ԱԲԳ բաղադրությունը, քաշը 1,980 տոննա է և չի համապատասխանում տեխնիկական հատկանիշներին:

25- Ասուպը ստանալով նամակը օգոստոսի 14-ին դրա պատճենը ուղարկում է Գրանդին պահանջելով բացատրություն՝ նշված անհամապատասխանությունների համար նույն նամակի պատճենը ուղարկելով նաև Պալասին:

26- Գրանդը օգոստոս 15-ին Էլեկտրոնային նամակով պատասխանում է Ասուպին, պատճենը Պալասին, որ Ապրանքը բեռնաբարձումից առաջ ստուգվել է Ասուպի կողմից նշանակված Ինսպեկտ րնկերության կողմից որը հաստատել է ապրանքի տեխնիկական հատկանիշների և քաշի համապատասխանությունը Առուվաճառքի Պայմանագրում նշվածի հետ որով և ինքն այլևս չունի որևէ պատասխանատվություն այդ կապակցությամբ: Առավել ևս, ապրանքը բեռնաթափումից հետո ավելի քան 10 ժամ մնացել է Պալասի պահեստում և որևէ անհամապատասխանություն, եթե անգամ կա այդպիսին, որն ինքը բոլոր դեպքերում չի ընդունում, կարող է առաջացած լինել այդ ընթացքում:

27- Ասուպի առաջարկով Ասուպի կողմից բանակցությունների մի քանի հանդիպում է կազմակերպվում Պալասի, Գրանդի և Ասուպի մասնակցությամբ որոնք սակայն արդյունքի չեն հասնում:

28- Բանակցությունները արդյունքի չհասնելով Պալասը «Իրավարար Արբիտրաժային Կենտրոնի» մոտ արբիտրաժային գործ է հարուցում Գրանդի, Ասուպի և Ինսպեկտի դեմ հետևյալ պահանջներով`

28.1 Պալասը Ասուպից և Գրանդից պահանջում է`

(1) հետ վերցնել ուղարկված Ապրանքը, քանի որ այն չի համապատասխանում համաձայնեցված տեխնիկական և քաշային հատկանիշներին.

(2) Իր հաշվին Պալասին ուղարկել պատշաճ տեխնիկական հատկանիշներով սահմանված քանակի ապրանք.

(3) Վնասների հատուցում, իր վնասը գնահատելով 45,000 ԱՄՆ դոլար, որը բաղկացած է հետևյալից`

(ա) ճիշտ ապրանքը չստանալով Պալասը հնարավորություն չունի այն օգտագործել իր ընթացքի մեջ գտնվող շինարարական աշխարանքներում որի ուշացման հետևանքով առաջացած վնասը կազմում է 15,000 ԱՄՆ դոլար.

(բ) Վճարված ԱԱՀ և մաքսային վճարների համար 30,000 ԱՄՆ դոլար:

28.2 Պալասը Ինսպեկտից պահանջում է վերջինիս կողմից ոչ ճիշտ փորձաքննության հիման վրա տրված ստուգման վկայագրի հետևանքով պատճառված վնասների հատուցում, 45,000 դոլար, որը բաղկացած է հետևյալից`

(ա) ճիշտ ապրանքը չստանալով Պալասը հնարավորություն չունի այն օգտագործել իր ընթացքի մեջ գտնվող շինարարական աշխարանքներում որի ուշացման հետևանքով առաջացած վնասը հազմում է 15,000 ԱՄՆ դոլար.

(բ) Վճարված ԱԱՀ և մաքսային վճարների համար 30,000 ԱՄՆ դոլար:

28.3 Պալասը Ասուպից պահանջում է նաև հետ կանչել ԴԱԴ Բանկի մոտ բացված ակրեդիտիվը և ակրեդիտիվում մնացած գումարի բանկի մոտ չօգտագործված մնալու պատճառով վնասի հատուցում` 8,000 ԱՄՆ դոլար:

29- Պալասը -«Իրավարար Արբիտրաժային Կենտրոնին» ներկայացրած իր հայցում նշանակում է իր Արբիտրին:

30- «Իրավարար Արբիտրաժային Կենտրոնը» ստանալով Պալատի հայցը այն ուղարկում է Ասուպին, Գրանդին և Ինսպեկտին պահանջելով իրենց պատասխանը ներկայացնել 10 օրյա ժամկետում նշանակելով նաև Արբիտրաժային Տրիբունալում իրենց Արբիտրին:

31- Գրանդն ու Ասուպը նշված ժամկետում յուրաքանչյուրն առանձնաբար ներկայացնում է իր պատասխանը միասնաբար նշանակելով մեկ անձի որպես Արբիտր Արբիտրաժային Տրիբունալում:

32- Ինսպեկտը նշված ժամկետում ներկայացնում է իր պատասխանը առ այն, որ Ինսպեկտի և Գրանդի միջև առկա չէ արբիտրաժային համաձայնություն որով և Արբիտրաժային Տրիբունալը իրավասու չէ քննելու Պալատի կողմից Ինսպեկտի դեմ հարուցված գործը:

33- Նշանակված երկու Արբիտրները ընտրում են երրորդ՝ Նախագահող Արբիտրին: Արբիտրաժային Տրիբունալը իր առաջին նիստն է կայացնում 2024 թվականի փետրվարի 5-ին և կողմերից պահանջում ներկայացնել իրենց մանրամասն դիրքորոշումները մինչև 2024 թվականի փետրվարի 26-ը:

34- Կողմերի դիրքորոշումների փոխանակումից հետո արբիտրաժի նիստը կայանում է 2024 թվականի մարտի 9-ին: